«Հաստատում եմ»
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի տնօրեն, պատմական
գիտությունների դոկտոր
Ա. Ա. Բորոխյան

ԿԱՐԾԻՔ

Անդրանիկ Տիգրանի Շահինյանի՝ «Աշխատանքային միգրացիան որպես երիտասարդների մասնագիտական և սոցիալական կայացման փորձ (Շիրակի մարզի օրինակով)» ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության մասին

Ատենախոսությունը նվիրված է ՀՀ Շիրակի մարզի երիտասարդների աշխատանքային միգրացիայի սոցիոլոգիական ուսումնասիրությանը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով նրանց մասնագիտական և սոցիալական կայացման գործընթացներին: Թեմայի ուսումնասիրությունը մեր օրերում ունի կարևոր արդիական նշանակություն՝ պայմանավորված ՀՀ մարզերի անհավասար զարգացման, երիտասարդների զբաղվածության խնդիրներով, արտագաղթի բարձր ակտիվությամբ և ծառացած ժողովրդագրական մարտահրավերներով:

Դատելով աշխատանքի կառուցվածքից՝ կարող ենք նշել, որ հեղինակը փորձում է ապահովել տեսական հայեցակարգերից դեպի էմպիրիկ վերլուծություն անցման հետևողականություն: Ատենախոսության առաջին գլխում հեղինակը մեծ տեղ է հատկացնում աշխատանքի միջազգային միգրացիայի արդի տեսություններին, այդ թվում՝ երիտասարդների միջազգային միգրացիային, դրա տեսակներին և դրսևորման ձևերին (էջ 18-71): Միգրացիայի արդի տեսություններում ատենախոսն ընդգրկել է ինչպես դասական տնտեսագիտական մոտեցումները, այնպես էլ սոցիոլոգիական հայեցակարգերը. այդ առումով անդրադարձել է արևմտյան մի շարք հեղինակների մոտեցումներին և տեսակետներին: Հեղինակը երիտասարդների միջազգային միգրացիան դիտարկում է որպես բազմաշերտ, դինամիկ գործընթաց, որը ներառում է տնտեսական, սոցիալական, մշակութային բաղադրիչներ, որոնք իրենց ազդեցությունն են թողնում երիտասարդների հասունացման և ինքնության ձևավորման վրա: Անշուշտ, խրախուսելի է, որ հեղինակը այդ առումով կատարել է մեծ ծավալի աշխատանք՝ տեղյակ լինելով արևմտյան մի շարք գիտական ուղղությունների և դրանց հիման վրա ամրապնդելով ու հարստացնելով ատենախոսության տեսական հիմքերը: Դրանով հանդերձ՝ աշխատանքում բավարար չափով հստակեցված չէ հեղինակի սեփական տեսական մոտեցումը, և այդ առումով, բնականաբար, առաջանում են մի շարք հարցեր, որոնք ցանկալի կլիներ աշխատանքում առավել հստակեցնել. ի՞նչ տեսական բաց է

լրացնում հետազոտությունը, ի՞նչ նոր սոցիոլոգիական մեկնաբանություն է առաջարկվում, ինչո՞վ է հայկական փորձը տարբերվում միջազգային հետազոտություններից, կամ Շիրակի մարզի փորձը՝ մյուս մարզերից:

Հետազոտության առարկայի համակողմանի ուսումնասիրության նպատակով ատենախոսը կիրառել է ինչպես քանակական, այնպես էլ որակական հետազոտական մեթոդներ, իրականացրել է հարցումներ, փորձագիտական հարցազրույցներ, ֆոկուսխմբային քննարկումներ, կոռելացիոն և ռեգրեսիոն վերլուծություններ: Մեր կարծիքով՝ այս մոտեցումն արդյունավետ է և կարող է բարձրացնել արդյունքների հավաստիությունն ու գիտական հիմնավորումը: Բայց այս գլխի մեթոդաբանական մասի վերաբերյալ ևս ունենք որոշ դիտարկումներ. նպատակը և խնդիրները հստակ ձևակերպման կարիք ունեն, որոնք պետք է լինեն փոխկապակցված, ոչ կրկնվող և ներկայացվեն նույն տրամաբանության մեջ:

Հետազոտության առանցքը Շիրակի մարզն է, և ատենախոսության մեջ բերված խնդիրները անմիջականորեն պետք է արտացոլեն տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրողությունները: Որոշ վերապահումներով պետք է մոտենալ նաև գիտական թեմայի վերաբերյալ հեղինակի բերած նախնական հիպոթեզին, քանի որ ձևակերպումները ամբողջությամբ չեն համապատասխանում գիտական հիպոթեզի տրամաբանությանը: Դրանք ավելի շատ կանխադրույթներ, ենթադրություններ կամ ընդհանուր պնդումներ են, չեն արտահայտում պատճառահետևանքային փոխկապակցվածություն, և ձևակերպված չեն որպես հնարավոր ապացուցելի ենթադրություն:

Մյուս հարցը, որ այս բաժնում վերաբերում է ընտրանքի ծավալին (n-530): Արդյո՞ք այդ ծավալը ամբողջովին և անմիջականորեն վերաբերում է միգրացիայի փորձառություն ունեցող՝ Շիրակի մարզի երիտասարդներին, թե՞ այն վերաբերում է նաև աշխատանքային միգրացիայի չմեկնողներին, և, եթե այո, ի՞նչ համամասնությամբ: Շատ լավ կլիներ, որ մեթոդաբանության բաժնում հեղինակը անդրադառնար նաև հետազոտության ընթացքում առաջ եկած էթիկական խնդիրներին և սահմանափակումներին:

Անդրադառնանք նաև այն հարցին, թե որքանով է ատենախոսության մեջ հեղինակը կարողացել պահպանել պահանջվող գիտական էթիկայի նորմերը, որոնք կարող են պայմանավորված լինել նաև ատենախոսի անուշադրությամբ, բացթողումներով, վրիպակներով: Այդ հարցն անմիջականորեն առնչվում է նաև ատենախոսությունում հրատարակված իմ աշխատությունների գիտական հղմանը:

Ատենախոսության առաջին գլխի երրորդ ենթագլուխը (Ա 3)՝ «ՀՀ երիտասարդ աշխատանքային միգրանտների սոցիալական և էթնոժողովրդագրական բնութագիրը» (71-76 էջերը), ամբողջովին, բառացիորեն վերցված է Միհրան Գալստյանի «Աշխատանքային միգրացիան և սոցիալ-մշակութային գործընթացները Հայաստանում» (Եր., 2023) աշխատությունից (տե՛ս նշված աշխատության էջ 7, էջ 40-44): Ընդ որում, ատենախոսության մեջ բացակայում է որևէ հղում այդ աշխատությանը: Ավելին, նշված աշխատությունից վերցված որոշ պարբերությունների համար նշվել է ուրիշ հեղինակ կամ կազմակերպություն:

Օրինակ, այս պարբերությունը՝ «ռուսերեն кавказцы (կովկասցիներ) անվանմամբ պիտակավորում էին այդ տարածաշրջանից մեկնած բոլոր աշխատանքային միգրանտներին՝ անկախ ազգային պատկանելությունից, իսկ азиаты՝ (ասիական) Միջին Ասիայի պետություններից եկվորներին» (տե՛ս Մ. Գալստյան, նշվ., աշխ., էջ 43), նշված է հղում ՀՀ Վիճակագրական կոմիտե, ՄԱԿ-ի Միգրացիայի միջազգային կազմակերպություն, Միգրացիոն պատկերը ՀՀ-ում 2022 թվականին (Ըստ 2022 թվականի տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության կշռված արդյունքների), Երևան, 2024. 28 էջ, աղբյուրը (Ատենախոսություն, էջ 74): Կամ հետևյալ պարբերությունը. «Աշխատանքային միգրացիա» եզրույթի փոխարեն ժողովրդի շրջանում հաճախ օգտագործվում է «արտագնացությունը» (իմ կողմից հղվում է Է. Աղայանի բացատրական բառարանը), նշանակում է ուրիշ տեղ գնացող, իր մշտական վայրից այլ տեղ մեկնող, այլ տեղում աշխատանք կատարող, աշխատելու նպատակով տեղից տեղ գնացող» (տ՛ես, Գալստյան Մ., նշվ. աշխ., էջ 44)՝ որպես աղբյուր նշվել է ուրիշ հեղինակ (Հայրապետյան Ա.Ս., «Հայաստանի Հանրապետությունում միգրացիայի գործընթացների կարգավորման քաղաքականության սահմանադրաիրավական հիմնախնդիրները», Մենագրություն, ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան 2017, 342 էջ: Ատենախոսություն, էջ 74): Ատենախոսությունում կան մի շարք հղված էջեր (օրինակ՝ էջ 82, էջ 83 և այլն), որոնք չեն համապատասխանում վերը նշված իմ աշխատության էջերին: Բացի դրանից, ատենախոսության մեջ նշվում են մտքեր, մեջբերումներ, որոնք հղվում են վերը նշված աշխատությանը, սակայն հեղինակը ես չեմ (օրինակ՝ «Ներկա ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունում երիտասարդության հոսունությունն այնքան սուր չէ, որքան այն զգալի էր 1990-ական թվականների սկզբներին», Ատենախոսություն, էջ 83, հղվում է իմ աշխատությանը, էջ 142):

Ատենախոսության մեջ քննարկվում է նաև ՀՀ արտաքին միգրացիայի վերաբերյալ գործող օրենսդրական դաշտը, որտեղ ներկայացված որոշ օրենքներ ոչ բոլոր դեպքերում են առնչվում այդ հիմնախնդրին, օրինակ՝ «Լեզվի մասին», «Պետական սահմանի մասին», «Օտարերկրյա ներդրումների մասին», «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքները:

Արդյունքների վերլուծության գլխում (գլուխ Գ) տեղ են գտել նաև 31-43տ. և 44-56 տ. հարցազրույցի մասնակից անձինք (էջ 141), մինչդեռ հեղինակի կողմից էջ 95-ում նշվում է, որ դաշտային աշխատանքներն իրականացվել են ՀՀ Շիրակի մարզի 13-35 տ. երիտասարդների շրջանում:

Եզրակացություն

Ատենախոսության թեման հանդիսանում է գիտական հետաքրքրություն ներկայացնող և արդիական հիմնախնդրի ուսումնասիրությանը նվիրված աշխատանք: Այն ունի ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն և պարունակում է տարածաշրջանային սոցիոլոգիական կարևոր տվյալներ: Միաժամանակ, աշխատանքը պահանջում է տեսական նորույթի, մեթոդաբանական

հստակության և օգտագործված աղբյուրների հղման գիտական էթիկայի պահպանում, որն առավել կհամապատասխաներ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի հայցման աստիճանի համար ներկայացվող ակադեմիական պահանջներին:

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի
սոցիալական գործընթացների և ինստիտուտների
մարդաբանության բաժնի վարիչ,
պատմական գիտությունների դոկտոր
Միհրան Վարդգեսի Գալստյան

20.05.2026